



Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ, մայիսի 14-ին կայացավ նորաստեղծ վոկալ-գործիքային խմբի շնորհանդեսը: Վրացական «Նակերծպալի», «Իմեղի», «Գագափիսուլի» և նմանօրինակ չատ այլ խմբիկների կազմավորող և փորձված ղեկավար, երաժիշտ Վլադիմիր Ասատուրովը, արյան կանչով նպատակադրվել է ստեղծել «Հայարտուն» կենտրոնի հովանու ներքո գործող վոկալ-գործիքային խմբիկ: Վերջինս ներկայացրեց խմբիկի նպատակը, գործունեության ուղղությունները, նվագարանների տեսակները և ապագայի հեռանկարները:

Համայնքում ընդգրկված են 13-16 տարեկան, մայրաքաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ: Ուրախալի է, որ ամեն նվագարանի վրա նվագել սովորելու է երկուական տղա, այդպիսով պատրաստվելու են ռեգերային կադրեր: Հարվածային գործիքների վրա ուսանելու են Դանտես Վարդանյանը, Դավիթ Խարատյանը, կիթառի վրա նվագելու գործուն խորանալու են Գարի Ամիրխանյանը և Ալեքսանդր Սարոյանը, իսկ դաշնամուրի վրա նվագակցելու է Էդուարդ Զալինյանը: Պարապմունքներն ընթանալու են շաբաթական երեք անգամ: Այսօր, շնորհանդեսից հետո կայացավ առաջին պարապմունքը: